ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Գիտելիքների ստուգման թեստը կազմված է 70 առաջադրանքներից, որոնց ընդհանուր միավորը հավասար է 70-ի:

Դրանից ընտրովի առաջադրանքներին բաժին է ընկնում 40 միավոր (40 առաջադրանք), կարճերին՝ 24 միավոր (24 առաջադրանք) և կարճ-վանդակավորներին՝ 6 միավոր (6 առաջադրանք):

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստը ներառում է առաջադրանքներ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի հանրակրթական ծրագրերով նախատեսված թեմաներից:

Թեստի կատարման համար հատկացվում է 180 րոպե:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 1-3-րդ հարցերին:

«Ինքն ամեն ինչ պարունակում է, ամեն ինչի մեջ է, ամեն ինչից վեր է, ամեն ինչից դուրս է, ամեն ինչ նրանով է, և ամեն ինչ նրա փառքի համար է»:

1 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

1) Մեսրոպ Մաշտոց
2) Սեբեոս
3) Ագաթանգեղոս
4) Արիստակես Լաստիվերցի

2 **Ո՞ր աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) «Հայոց պատմություն»
2) «Ս. Գրիգոր Լուսավորչի Վարդապետությունը»
3) «Պատմություն»
4) «Տիեզերական պատմություն»

3 **Ու՞մ մասին է մեջբերված հատվածը.**

1) Ս. Գրիգոր Լուսավորիչ
2) Հայկ Նահապետ
3) Աստված
4) Պողոս առաքյալ

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 4-6-րդ հարցերին.

«Այս ժամանակ ծաղկելով պայծառացան Հայաստան աշխարհի կրոնավորական կարգերը, և բազում տեղերում կառուցվեցին եղբայրանոցներ, ուր Քրիստոսի սիրով հավաքվեցին մենակյացները:
Առաջինը Կամրջաձորի մեծահռչակ ուխտն էր Արշարունյաց գավառում…: Իսկ Շիրակ գավառում Հոռոմոսի կոչված վանքը շինվեց Հովհաննեսի ձեռքով…: Այս ժամանակ կառուցվեց Նարեկ (վանքը) Ռշտունյաց գավառում, նույն կարգերով՝ Հնձուց վանքը՝ Կարին գավառում, Դպրեվանքը՝ Շիրակում, Ցախաց քարը՝ Վայոց ձոր գավառում»:

4 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

1) Մովսես Կաղանկատվացի
2) Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ
3) Հովհաննես Դրասխանակերտցի
4) Թովմա Արծրունի

5 **Ո՞ր կաթողիկոսի մասին է մեջբերված հատվածը.**

1) Գևորգ Բ. Գառնեցի
2) Գրիգոր Գ. Պահլավունի
3) Անանիա Ա. Մոկացի
4) Մաշտոց Ա. Եղիվարդեցի

6 **Նշվածներից ո՞ր կարևոր իրադարձությունն է տեղի ունեցել տվյալ կաթողիկոսի գահակալության տարիներին.**

1) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինա
2) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Դվին
3) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Զվարթնոց
4) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Ծոփք

7 **Ի՞նչ նշանավոր իրադարձությանն է վերաբերում Թովմա Մեծոփեցու «Հիշատակարանից» ստորև մեջբերված հատվածը.**

«… Եվ ահա այդ ժամին եկավ մի արծիվ սավառնաթև, սաստիկ գոչյունով նստեց Էջմիածնի Մայր տաճարի գլխին, և շատերը թողեցին հոգևոր ուրախությունը, ելան տեսան ու եկան պատմեցին…»:

1) Գրիգոր Լուսավորիչի տեսիլքը Մայր Տաճարի հետ կապված:
2) Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Էջմիածնում:
3) Ներսես Մեծի տեսիլքը և Աշտիշատի ժողովի գումարումը:
4) Գրերի գյուտը և Մեսրոպ Մաշտոցի մուտքը Մայր Տաճար:

8 **Ո՞ր արքայի մասին է մեջբերված հատվածը.**

«Բնավորությամբ բարի էր նա, աղքատների ու կարոտյալների հանդեպ ողորմած, եկեղեցու ու Աստծու սպասավորների նկատմամբ սիրալիր: Վանքեր էր հաստատում իր տերության բոլոր կողմերում ու բազմացնում էր նրանց պիտույքները, որպեսզի մարմնավոր պետքերից ոչ մի բանի կարիք չզգան, այլ որ միքայն աղոթքներով ու արարողություններով զբաղվեն: Նրա հաստատած վանքերից մեկն էր Ակներ կոչված հռչակավոր վանքը»:

1) Արշակ II Արշակունի
2) Աշոտ III Ողորմած
3) Գագիկ I Բագրատունի
4) Լևոն Ա.Մեծագործ

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 9-րդ և 10-րդ հարցերին.

«Դրանք «խելքի չեկած մծղնե աղանդի բեկորներն են», որոնք «դաշնակցելով թլպատված (նկատի ունի արաբներին) բռնակալների հետ, նրանց ստվերագիր առասպելապատում մատյանների հմուտ օգտագործմամբ՝ համբակներին ներգրավեցին իրենց բազմության մեջ»:

9 **Հայոց ո՞ր նշանավոր կաթողիկոսի մասին է խոսքը.**

1) Հովհաննես Գ. Օձնեցի
2) Բարսեղ Ա. Անեցի
3) Ներսես Դ. Կլայեցի
4) Մովսես Գ. Տաթևացի

10 **Ո՞ր աղանդավորների մասին է մեջբերված հատվածը..**

1) բորբորիտներ
2) հոգեգալստականներ
3) պավլիկյաններ
4) թոնդրակյաններ

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 11-րդ և 12-րդ հարցերին.

« ... Զինվորական քահանան պարտավոր է զինվորներին սովորեցնել «Հայր մեր» աղոթքը և երգել տալ առավոտյան քնից արթնանալուց հետո, երեկոյան քնից առաջ և ճաշին»:

11 **Ե՞րբ է Ամենայն Հայոց կաթողիկոսը հաստատել մեջբերված հատվածը պարունակող փաստաթուղթը.**

1) 1918 թ.
2) 1919 թ.
3) 1920 թ.
4) 1921 թ.

12 **Ո՞ւմ ներկայացմամբ է Ամենայն Հայոց կաթողիկոսը հաստատել այդ փաստաթուղթը.**

1) Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր -Մովսիսյան
2) Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան
3) Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյան
4) Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայան

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 13-րդ և 14-րդ հարցերին.

«… Յուրաքանչյուր գյուղում եկեղեցիները փակելու գործում հանդես են եկել մի քանի անձնավորություններ միայն, ովքեր և իրենց կողմից սպառնացել են գյուղի ազգաբնակչությանը՝ չհամարձակվել բողոքել: Այդ պատճառով էլ հավատացյալ անկուսակցական գյուղացիությունը գրավոր բողոք ստորագրելուց խուսափել է՝ երկյուղ կրելով բանտարկությունից և պատժից»:

13 **Հայոց ո՞ր կաթողիկոսնի գրությունից է մեջբերված հատվածը.**

1) Գևորգ Զ Չորեքչյան
2) Խորեն Ա Մուրադբեկյան
3) Գևորգ Ե. Սուրենյանց
4) Վազգեն Ա. Պալճյան

14 **Ու՞մ է ուղղված գրությունը.**

1) Ստալինին
2) ՀՍԽՀ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանին
3) ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին
4) Նիկիտա Խրուշչովին

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 15-րդ և 16-րդ հարցերին.

«…Բուղա արաբ զորավարն իր հետ արքունիք տարավ նաև հայոց Սմբատ Սպարապետին: Եվ խալիֆան բազմաթիվ խոստումներ էր տալիս նրան, միայն թե ընդուներ մահմեդականություն: … Սակայն մեծ սպարապետ Սմբատը, քաջաբար ելնելով ստի դեմ, Քրիստոսի հավատից բնավ չշեղվեց՝ գերադասելով նահատակվել քրիստոնեական հավատի համար: …»:

15 **Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան
2) Ստեփանոս Տարոնեցի
3) Հովհաննես Դրասխանակերտցի
4) Վարդան Արևելցի

16 **Քրիստոնյաները որտ՞եղ են ամփոփել սպարապետ Սմբատ Բագրատունու աճյունը.**

1) Հռոմոսի վանքում
2) Վանի մոտ գտնվող Չորովանքում
3) Սևանի կղզու Ս.Աստվածածին եկեղեցու բակում
4) Դանիել մարգարեի անունը կրող վկայարան-եկեղեցում

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 17-րդ և 18-րդ հարցերին.

«Եվ ինչպես կարելի է այդ իմ հոտի հիվանդ ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի առողջությունը մեզ համար պատուհաս է»:

17 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

1) Ներսես Մեծ
2) Սահակ Պարթև
3) Խրիմյան Հայրիկ
4) Ներսես Շնորհալի

18 **Ու՞մ աշխատությունից է մեջբերված խոսքերը.**

1) Ղազար Փարպեցի
2) Միքայել Չամչյան
3) Մովսես Խորենացի
4) Փավստոս Բուզանդ

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 19-րդ և 20-րդ հարցերին.

« .... Երկար տարիներ իբրև կուսակրոն քահանա ծառայելով՝ կամեցավ նաև հմտանալ Սուրբ Գրքի ուսման և առակների մեկնության մեջ: Բազմաթիվ վարդապետների մոտ ուսանելով՝ ստացավ վարդապետական աստիճան, բայց, դրանով չբավարարվելով, գնաց Կիլիկիա՝ Սև լեռ կոչված վանքը, որտեղ բազմաթիվ ուսուցիչներ ու վարդապետներ էին ապրում: ... Ուսումն ավարտելուց հետո նա Կայեն գավառում՝ Աղստև գետի ափին, հիմնեց Գետիկի վանքը.»:

19 **Ու՞մ մասին է մեջբերված հատվածը.**

1) Ս. Հովան Որոտնեցի
2) Ներսես Մշեցի
3) Ս. Գրիգոր Տաթևացի
4) Մխիթար Գոշ

20 **Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) Կիրակոս Գանձակեցի
2) Մատթեոս Ուռհայեցի
3) Արիստակես Լաստիվերցի
4) Թովմա Մեծոփեցի

21 Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.

« … Հայեր, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, արթնացեք և ուխտեցեք մնալ հավատարիմ ազատն Հայկ Նահապետին և մեր հոգիների Լուսավորչին ամենասուրբ »:
Ողջույն և օրհնություն Հայաստանի ինքնիշխան անկախ մեր Հանրապետության:
Օրհնություն և փառք մեր ազատատենչ ու հավատարիմ անմահ ազգին»:

1) Մկրտիչ Ա Խրիմյան
2) Վազգեն Ա Պալճյան
3) Գարեգին Ա Սարգսյան
4) Գարեգին Բ Ներսիսյան

22 Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.

«Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական»:

1) Ներսես Ե Աշտարակեցի
2) Գևորգ Ե. Սուրենյանց
3) Մկրտիչ Ա. Խրիմյան
4) Վազգեն Ա. Պալճյան

23 Ո՞ր աղբյուրից է մեջբերված հատվածը.

«…Ուսումն ավարտելուց հետո նա Կայեն գավառում՝ Աղստև գետի ափին հիմնեց Գետիկի վանքը…Շուտով վանքը փլուզվեց երկրաշարժի պատճառով, և երանելի վարդապետն իր աշակերտների հետ Տանձուտի ձոր կոչված վայրում հիմնեց Նոր Գետիկի վանքը, որն անվանեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով »:

1) Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն
2) Թովմա Մեծոփեցի, Հիշատակարան
3) Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն
4) Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Տիեզերական պատմություն

24 **Հայոց ո՞ր կաթողիկոսին է այս խոսքերով նկարագրել պատմիչը.**

«Հայոց ... կաթողիկոսը շատ գեղեցիկ տեսք ուներ, մշտապես ուսկեհուռ զգեստներ էր հագնում և փառահեղ մորուքի վրա ոսկու փոշի էր շաղ տալիս»:

1) Ս. Հովհաննես Գ. Օձնեցի
2) Ս. Սահակ Ա. Պարթև
3) Ս. Գրիգոր Լուսավորիչ
4) Ս. Ներսես Ա. Պարթև

25 **Նշված աշխատությունները համապատասխանեցնել դրանց հեղինակներին.**

1) «Աղվանից երկրի պատմություն»
2) «Տիեզերական պատմություն»
3) «Պատմություն»
4) «Ժամանակագրություն»
5) «Պատմություն թաթարաց»
6) «Հայոց պատմություն»
7) «Նետողաց ազգի պատմություն»
8) «Շուշանիկի վկայաբանությունը»

ա) Վարդան Արևելցի
բ) Մովսես Կաղանկատվացի
գ) Գրիգոր Դարանաղցի
դ) Մխիթար Անեցի
ե) Անանուն պատմիչ
զ) Հովհաննես Դրասխանակերտցի
է) Գրիգոր
ը) Հեթում

1) 1-ը, 2-դ, 3-է, 4-բ, 5-ե, 6-զ, 7-գ, 8-ա
2) 1-բ, 2-ը, 3-ա, 4-է, 5-դ, 6-զ, 7-ե, 8-թ
3) 1-գ, 2-բ, 3-է, 4-թ, 5-ե, 6-դ, 7-զ, 8-ը
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ, 5-ը, 6-զ, 7-է, 8-ե

26 **Կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց գահակալման տարիներին տեղի ունեցած իրադարձություններին.**

1. Ս.Հովհաննես Մանդակունի
2. Ս. Սահակ Ա. Պարթև
3. Ս. Հովհաննես Գ. Օձնեցի
4. Ս. Ներսես Ա. Պարթև
5. Ս. Գրիգոր Լուսավորիչ
6. Բաբկեն Ա. Ոթմսեցի
7. Ս. Հովսեփ Ա. Հողոցմեցի

ա) Աշտիշատի ժողովի գումարումը
բ) Նվարսակի հաշտության պայմանագրի կնքումը
գ) Դվինի առաջին եկեղեցական ժողովի հրավիրումը
դ) Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրումը
ե) Ավարայրի ճակատմարտը
զ) Շիրակավանի ժողովի գումարումը
է) Հայոց գրերի գյուտը
ը) Պավլիկյանների դեմ հատուկ կանոնի ընդունումը Դվինի եկեղեցական ժողովում

1) 1-բ, 2-է, 3-ը, 4-ա, 5-դ, 6-գ, 7-ե
2) 1-ա, 2-է, 3-գ, 4-զ, 5-ե, 6-ը, 7-բ
3) 1-զ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-դ, 6-ը, 7-է
4) 1-գ, 2-ե, 3-ը, 4-է, 5-ա, 6-զ, 7-բ

27 **Թվարկվածներից որո՞նք գմբեթավոր եկեղեցիներ չեն.**

ա) Ս. Հռիփսիմե
բ) Գառնիի
գ) Տեկորի
դ) Զովունիի
ե) Ս. Գայանե
զ) Դվինի
է) Դդմաշենի
ը) Եղվարդի

1) բ, գ, զ, ը
2) ա, բ, դ, ը
3) գ, ե, զ, է
4) ա, դ, ե, է

28 **Ստորև թվարկված տոներից ո՞ր երեքը Տերունական տոներ չեն.**

ա) Սուրբ Սարգսի տոն
բ) Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոն
գ) Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոն
դ) Համբարձման տոն
ե) Սուրբ Վարդանանց տոն
զ) Խաչվերաց
է) Սուրբ Թարգմանչաց տոն
ը) Սուրբ Հարություն

1) ա, ե, է
2) բ, գ, ե
3) դ, զ, է
4) ա, բ, ը

29 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա) Գրիգոր Գ կաթողիկոսի հանձնարարությամբ Ներսես Շնորհալին 1165թ. բանակցություններ է սկսում Կիլիկիայի բյուզանդական զորահրամանատարի հետ, քաղկեդոնություն ընդունելու շուրջ։

բ) Աղթամարի Զաքարիա Գ կաթողիկոսը ամեն կերպ խոչընդոտում էր կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելուն։

գ) Հովհաննես կաթողիկոսը հրաժարվում է Զաքարեին ուղարկել պատարագի համար նախատեսված վրան և մարմարե շարժական սեղան։

դ) 1254թ. մոնղոլները դաշնակցային պայմանագիր կնքեցին Հեթում 1-ինի հետ, որի 1, 2-րդ և 4-րդ կետերը վերաբերում էին Հայոց եկեղեցուն և քրիստոնեական հավատին մոնղոլական տերության մեջ։

ե) 1441թ. Երուսաղեմի հայոց պատրիարք Հովհաննես եպիսկոպոսը չընդունեց Ամենայն Հայոց հաթողիկոսի գերագահությունը։

զ) 1307թ. Հեթում 2-րդը մի քանի համախոհ հոգևորականների հետ, Սիսում հրավիրում է ժողով, որը որոշում է ընդունել Քաղկեդոնի դավանանքը։

է) Հակոբ Բ Անավարզեցին չի արգելում միարարներին լատինական ծեսով կատարել պատարագ։

ը) 1361թ. Մեսրոպ Ա Արտազեցին Սիսում հրավիրում է ժողով, որը չեղյալ է հայտարարում Սսի և Ադանայի ժողովների ընդունած որոշումները։

թ) Կարապետ Եվդոկացիով սկսվում է Կիլիկյան կաթողիկոսների ցանկը։

1) ա, գ, ե, զ
2) բ, զ, է, ը
3) դ, զ, ը, թ
4) ա, գ, ե, է

30 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա) Երրորդ փորձության ժամանակ Հիսուս սատանային ասաց, որ մարդը միայն հացով չի ապրում, այլ նաև Աստծո խոսքով:
բ) Սատանայի՝ Հիսուսին մոլորեցնելու բոլոր չորս փորձերը ձախողվեցին:
գ) Երկրորդ փորձության ժամանակ սատանան Հիսուսին տարավ մի բարձր աշտարակի վրա և ասաց, որ եթե Աստծո Որդին է թող իրեն ցած նետի, քանի որ Աստված չի թողնի, որ նա վնասվի:
դ) Անապատում Հիսուս 49 օր ոչինչ չկերավ և քաղց զգաց:
ե) Առաջին փորձության ժամանակ Հիսուս սատանային ասաց, որ Աստծուն փորձել չի կարելի:
զ) Անապատում Հիսուս անընդհատ աղոթում էր և մտածում մարդկանց փրկության մասին:
է) Երրորդ փորձության ժամանակ Հիսուս սատանային ասաց, որ միայն Աստծուն պետք է երկրպագել:

1) ա, գ, դ
2) գ, զ, է
3) բ, դ, զ
4) ա, բ, ե

31 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա) Մխիթարի և նրա առաջին աշակերտների հավատամքն էր «ազգը չզոհել կրոնին և կրոնը՝ ազգությանը», հետևաբար՝ նրանք մերժում էին հայերի կրոնական երկպառակտությունը և կաթոլիկ քարոզ չությունը նրանց շրջանում։

բ) «Սիրո մեջ երկյուղ չկա և կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը»։

գ) Ներսես Աշտարակեցին ռուսական Սինոդին գրավոր ներկայացնում է Հայոց եկեղեցու դավանանքը՝ չմերժելով քննարկել հայ-ռուսական եկեղեցիների հնարավոր միության հարցը։

դ) Սիմոն Երևանցին 1780թ. Մայր Աթոռում հրավիրում է գաղտնի խորհրդաժողով, որը դիմում է Եկատիրինա կայսրուհուն՝ խնդրելով նրա օգնությունը։

ե) Ղուկաս Ա Կարնեցու մահից հետո կաթողիկոս է ընտրվում Ներսես Աշտարակեցին։

զ) Աշտիշատի ժողովը որոշում է հովանավորել ճգնավորական կամ անապատական շարժումը։

է) Ս. Արիստակեսին հատու և վճռական խոսքերի համար «Հոգևոր սուր» էին անվանում։

ը) 301 թվականից հետո Ս. Գրիգոր Լուսավորիչը իր թոռանը՝ Ս. Գրիգորիսին ձեռնադրեց Աղվանից կաթողիկոս և ուղարկեց Աղվանք։

1) ա, բ, զ, է
2) դ, զ, է, ը
3) ա, ե, է, ը
4) բ, գ, դ, զ

32 **Հայոց եկեղեցու տոների վերաբերյալ բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա) Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը ժողովրդի մեջ հայտնի է Վարդավառ անունով:

բ) Հայոց եկեղեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Սուրբ Սարգսի տոնը հռչակել է նորապսակների և նորակազմ ընտանիքների օրհնության օր:

գ) Խաչվերացի տոնին, երեկոյան ժամերգությունից հետո, ռեհանով զարդարված խաչը հոգևորականները ժողովրդի ուղեկցությամբ դուրս են հանում բակ, պտտեցնում եկեղեցու շուրջը՝ օրհնելով աշխարհի չորս կողմերը:

դ) Վարագա Սուրբ Խաչի տոնը նվիրված է Քրիստոսի խաչափայտի մասունքի հայտնաբերման հիշատակին:

ե) Տյառնընդառաջը տոնվում է փետրվարի 14-ին և այն Հայոց եկեղեցու հինգ տաղավար տոներից է:

զ) Վարդանանց տոնը շարժական տոն է և տոնվում է հունվարի 29-ից մինչև մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում:

է) Համբարձման տոնը Հայոց եկեղեցու շարժական տոներից է և տոնվում է Զատկին հաջորդող 40-րդ օրը:

1) ա, գ, ե, զ
2) գ, դ, զ, է
3) բ, գ, դ, է
4) ա, բ, ե, զ

33 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա) Փոքր Հայքում այդպես էլ չձևավորվեցին քրիստոնեական համայնքներ, գործում էին մի քանի քահանաներ.

բ) 608թ. վրաց եկեղեցին բաժանվում է Արևելյան եկեղեցական ընտանիքից և միանում է բյուզանդական եկեղեցուն։

գ) 20-րդ դարի 80-90-ական թվականներին Հայաստան մուտք գործած աղանդավորական շարժումներին չհաջողվեց հայ հասարակության մեջ ձեռք բերել հետևորդներ և ձևավորել համայնքներ։

դ) Նորընտիր կաթողիկոսի 1801թ. Թիֆլիսում հանկարծամահ լինելու հետևանքով, կաթողիկոսական աթոռը դառնում է պայքարի առարկա։

ե) Մի քանի կրոնական-քաղաքական բաժանումների և անհամաձայնությունների հետևանքով Հռոմկլայի Հայոց կաթողիկոսությանը չի հաջողվում վերականգնել իր իրավունքները։

զ) Բոլոր բնագավառներում տիրապետող անորոշության հետևանքով ծնունդ առավ մի նոր աստծու գաղափար, որին անվանեցին Անծանոթ Աստված։

է) Պետրոս կաթողիկոսն է հիմնել Բջնիի եպիսկոպոսական աթոռը, որը հետագայում մեծ դեր է կատարել Արարատյան երկրամասում։

ը) 1906թ. ազգային-եկեղեցական ժողովում հնչած հակաթուրք ական ելույթների հետևանքով ոստիկանությունը ցրեց այն։

1) դ, ե, զ, է
2) ա, դ, ե, է
3) բ, գ, ե, զ
4) բ, դ, զ, է

34 **Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք չեն.**

ա) Աղվենի եկեղեցական ժողովում ընդունված որոշումների պատճառով Հայոց եկեղեցին պառակտվեց։
բ) Մուհամմադի հեղինակության բարձրացման պատճառով Յասրիբը վերանվանեցին «Մարգարեի քաղաք»։
գ) Արևելյան եկեղեցական ընտանիքից 608 թ. վրաց եկեղեցու բաժանման պատճառով վրաց եկեղեցին մաս կազմեց օրթոդոքս եկեղեցուն՝ ընդունելով Կ.Պոլսի տիեզերական պատրիարքի առաջնայնությունը, հունական եկեղեցու ծեսերն ու արարողությունները։
դ) Սփյուռքահայերի խնդրանքը հաշվի առնելով 1938 թ. ՀԿ(բ)Կ կենտկոմը հրաժարվեց Ս. Էջմիածինը փակելու մտադրությունից։
ե) Քաղկեդոնի ժողովում ընդունված երկաբնակ դավանաբանական բանաձևի պատճառով քրիստոնեական եկեղեցու ներսում խորացան խռովություններն ու գժտությունները։
զ) Տիեզերական ժողովներում ընդունված որոշումների պատճառով խաչքարային արվեստն անկում ապրեց։
է) Արիոս երեցի սխալ քարոզների պատճառով IV դարում խախտվեց եկեղեցու խաղաղությունը։

1) ա, գ, ե
2) բ, գ, դ
3) ա, դ, զ
4) ե, զ, է

35 **Թվարկվածներից որո՞նք կաթողիկոսական աթոռը կիլիկիա տեղափոխելու իրական պատճառ չեն հանդիսացել։**

ա) Բագրատունյաց թագավորության անկումից առաջ և հետո հայ ազգաբնակչությունը զանգվածաբար արտագաղթում էր դեպի արևմուտք։
բ) Տարածաշրջանում հաստատված հայ իշխանների գործուն աջակցությունը Հայոց եկեղեցուն։
գ) Բարսեղ Անեցին միավորված աթոռը չի տեղափոխում Հայաստան։
դ) Գրիգոր Գ Պահլավունու անսպասելի այցը Կ. Պոլիս։
ե) Հայոց կաթողիկոսի կողմից մահմեդական իշխաններից Հռոմկլա ամրոցի գնումը։
զ) Ծոփքում հաստատված Դավիթ եպիսկոպոսի մտերիմ հարաբերությունները մահմեդական մի քանի իշխանների հետ։
է) Շուղրիի Կարմիր Վանքի գրավումը խաչակիրների կողմից։

1) դ, ե, զ, է
2) ա, դ, ե, է
3) բ, գ, ե, զ
4) բ, դ, զ, է

36 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

ա) Գող Վասիլի իշխանության քայքայման պատճառով Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը հայրապետական աթոռը տեղափոխեց Ծոփք։
բ) Գևորգ Գառնեցի կաթողիկոսը, Դվինի 893 թ. կործանարար երկրաշարժի հետևանքով, ստիպված կաթողիկոսարանը տեղափոխեց Զվարթնոց։
գ) 1292 թ. եգիպտական մամլուքների կողմից Հռոմկլեա կաթողիկոսանիստ ամրոցի գրավման պատճառով Լևոն Մեծագործ թագավորը հայրապետական աթոռը տեղափոխեց Սիս մայրաքաղաք։
դ) IX դարի երկրորդ կեսին Սյունիքում վերականգնվում է Սյունյաց մետրոպոլիտությունը Տաթև կենտրոնով։
ե) Արաբական նոր արշավանքի պատճառով Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Արգինա։
զ) Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի՝ բյուզանդացիների պահանջները ընդունելու պատճառով 1178 թ. Սսում հրավիրվեց համահայկական եկեղեցական ժողով։
է) Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսի գործունեության հետևանքով Հոնիի, Մարաշի և Տարսոնի կաթողիկոսությունները դադարեցին գոյություն ունենալուց։

1) ա, դ, ե
2) բ, գ, զ
3) ա, բ, դ
4) դ, զ, է

37 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Հայկական պատվիրակությունը Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ ժամանում է Կ. Պոլիս։
բ) Զաքարիա Գ կաթողիկոսը բանակցություններ է վարում թուրքմեն Ջահան շահի հետ։
գ) Ս. Էջմիածնում Սալմաստեցին հրավիրում է գաղտնի խորհրդաժողով։
դ) Միքայել Սեբաստացին Սեբաստիայի Մայր եկեղեցում հրավիրում է գաղտնի խորհրդաժողով։
ե) Ստեփանոս Տղան օծվում է Հայոց թագավոր։
զ) Հակոբ Մեղապարտը հրատարակում է «Ուրբաթագիրքը»։
է) Պարսից շահ Աբաս 1-ը կազմակեպեց արևելահայերի/շուրջ 400 հազար/ բռնագաղթը Պարսկաստան։
ը) Մովսես Տաթևացին ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս։
թ) Վենետիկում տպագրում է «Օրացույց» և «Սաղմոսարան» գրքերը։

1) գ, բ, դ, զ, է, թ, ա, ե, ը
2) դ, գ, զ, բ, թ, է, ա, ը, ե
3) բ, ե,զ, գ, դ, թ, է, ը, ա
4) գ, դ, է, զ, բ, ը, ա, ե, թ

38 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված եկեղեցական ժողովներից ո՞րն է գումարվել վեցերորդը.**

ա) Սեբաստիայի խորհրդաժողովը
բ) Շահապիվանի եկեղեցական ժողովը
գ) Շիրակավանի եկեղեցական ժողովը
դ) Էջմիածնի «Տերանց Հայոց» գաղտնի խորհրդաժողովը
ե) Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը
զ) Աղվենի եկեղեցական ժողովը
է) Արտաշատի ժողովը
ը) Նորավանքի եկեղեցական ժողովը
թ) Աշտիշատի ժողովը

1) ե
2) գ
3) ը
4) բ

39 **Կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

ա) Ս. Հովսեփ Հողոցմեցի
բ) Մովսես Բ Եղիվարդեցի
գ) Բաբկեն Ա
դ) Խաչիկ Ա
ե) Զաքարիա Ա Զագեցի
զ) Պետրոս Ա Գետադարձ
է) Սարգիս Ա
ը) Գրիգոր Գ Պահլավունի
թ) Կոնստանդին Ա Բարձրաբերդցի

1) բ, ա, գ, դ, զ, ե, ը, թ, է
2) ա, գ, բ, ե, դ, է, զ, ը, թ
3) բ, դ, ա, զ, ը, է, թ, ե, գ
4) գ, ա, է, զ, բ, դ, ը, ե, թ

40 **Հայ նշանավոր հոգևոր գործիչների անունները դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հարջորդականության.**

ա) Ներսես Շնորհալի
բ) Եզնիկ Կողբացի
գ) Մխիթար Գոշ
դ) Գրիգոր Լուսավորիչ
ե) Մովսես Տաթևացի
զ) Գրիգոր Տաթևացի
է) Անանիա Շիրակացի
ը) Դավիթ Անհաղթ
թ) Գրիգոր Նարեկացի

1) դ, բ, ը, է, թ, ա, գ, զ, ե
2) դ, բ, է, ա, ը, թ, գ, զ, ե
3) բ, դ, թ, է, ը, գ, ա, զ, ե
4) բ, ը, դ, զ, է, թ, ե, ա, գ

41 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունը.**

1) Սալահունյաց գավառում ապրող Սուրեն իշխանը իր միակ աղջկան նվիրել էր Աթենաս աստվածուհուն և նրա անունով կոչել Աթենադորոս(Աթենասի սիրելի)։
2) Զայրացած Տիրան թագավորը հրամայում է բրածեծ անել, այսինքն գանահարել Ս. Արիստակեսին։
3) Նոր կայսրը 363թ. պարսիկների հետ կնքում է «Ամոթալի հաշտության» պայմանագիր, ըստ որի պարտավորվում է այլևս չօգնել հայերին։
4) Հանրահայտ փիլիսոփա Սոկրատեսը գտնում էր, որ կյանքի նպատակը երջանկությունն է։
5) Ըստ հանրահայտ փիլիսոփա Պլատոնի՝ բարձրագույն իդեալը բարիքն է, որն իր մեջ ներառում է կամքի և մտածողության ազատությունը և երջանկությունը։
6) Մինչև օրհնած ջրով մկրտվելը, կատարվում է Դրոշմի խորհուրդը։
7) Բարոյական առաքինություններից ամենակատարյալը, ըստ Արիստոտելի, արդարությունն է։
8) «Պոլոժենիե» կանոնադրության համաձայն ազգային-եկեղեցական ժողովը առաջարկում էր կաթողիկոսական երեք թեկնածու, որոնցից մեկին ցարը հաստատելու էր կաթողիկոս։

42 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն համարվում է լավագույն թարգմանությունը և անվանվում է «Թարգմանությունների թագուհի»։
2) «Քրիստոսի անձեռակերտ դիմանկարը» հայտնի է «Տիրոջ դաստառակ», «Փրկչի կենդանագիր պատկեր» և այլ անուններով։
3) Հեթանոս հայերի պատկերացմամբ՝ աշխարհը բաղկացած էր երեք մասից՝ Երկինք, Երկիր և Ծով։
4) Տերունական բոլոր տոները և պահքի օրերը կոչվում են Տաղավար տոներ։
5) Ըստ հին հույների՝ աստվածներն ապրում էին Հիմալայան լեռներում։
6) Ըստ պարսիկների՝ աշխարհը բաղկացած էր երկու մասից՝ Անմահական ջրից և Ոսկե ձվից։
7) Ըստ «Վեդաների» աշխարհը ստեղծել էր գերագույն աստված Ահուրամազդան։

43 **Թվարկվածներից որո՞նք Հայոց եկեղեցու յոթ մոլություններից չեն.**

1) նախանձ
2) վախկոտություն
3) ժուժկալություն
4) բղջախոհություն
5) ստորություն
6) բարկություն

44 **Թվարկված հոգևոր-բարեպաշտական արարողություններից որո՞նք են միայն Հայոց եկեղեցուն բնորոշ ազգային քրիստոնեական արարողություններ.**

1) Աղօրհնեք
2) Տնօրհնեք
3) Խաչակնքում
4) Ջրօրհնեք
5) Ուխտագնացություն
6) Խաղողօրհնեք
7) Մատաղ

45 **Թվարկվածներից որո՞նք հայ զինվորականության պատվո վարքականոնի գլխավոր 8 դրույթ-պահանջներից են.**

1) Նվիրվածություն և հավատարմություն իրենց բնակավայրի քահանաներին և եկեղեցու սպասավորներին:
2) Նվիրվածություն ընտանիքին:
3) Ներողամտություն հակառակորդի նկատմամբ:
4) Հավատարմություն և անձնուրաց ծառայություն քրիստոնեական բոլոր եկեղեցիներին:
5) Քրիստոնեական հավատի և ազգային եկեղեցու նկատմամբ բարեպաշտ վերաբերմունք և դրանց անձնուրաց պաշտպանություն:
6) Հավատարմություն զինակիցներին:
7) Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի բոլոր բնակիչներին՝ անկախ նրանց սոցիալական ծագումից և դիրքից:

46 **Թվարկվածներից ո՞ր որոշումներն են հաստատվել 1114 թ. Շուղրի Կարմիր վանքում հրավիրված ժողովում:**

1) Ժողովում հաստատվեց, որ նոր կաթողիկոսի ընտրությունը պետք է կատարվեր Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի կողմից:
2) Ժողովում հաստատվեց, որ նոր կաթողիկոս կարող էր ընտրվել միայն Կիլիկիայի կաթողիկոսական աթոռից:
3) Ժողովը դատապարտեց և բանադրեց Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունը:
4) Ժողովը դատապարտեց և բանադրեց Տաթևի հակաթոռ կաթողիկոսությունը:
5) Ժողովում հաստատվեց, որ նոր կաթողիկոսի ընտրությունը պետք է կատարվեր Հայաստանի չորս նշանավոր եկեղեցական աթոռների համաձայնությամբ:
6) Ժողովում հաստատվեց, որ Աղթամարի կաթողիկոսությունը պետք է զբաղվեր միայն Մեծ Հայքի կրոնադավանաբանական հարցերով:
7) Ժողովում հաստատվեց Հայոց կաթողիկոսի ընտրության նոր կարգ:

47 **Հայոց եկեղեցու վերաբերյալ բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Հովհաննես Հերմոնեցիով սկսվում է Կիլիկյան կաթողիկոսների ցանկը:
2) Աղվանից կաթողիկոսությունն իր գոյության ամբողջ ընթացքում գործել է Ամենայն Հայոց կաթողիկոոսության ներքո:
3) Երուսաղեմում բազմաթիվ եկեղեցիներից և տարածքներից բացի հայերի սեփականությունն է ճանաչվել համայն քրիստոնեության ամենագլխավոր սրբություններից մեկը՝ Ս. Հակոբ տաճարի մի մասը:
4) 1113թ. Վասպուրականի հոգևորականների մի խումբ Դավիթ Թոռնիկյան եպիսկոպոսին հռչակում է Ամենայն Հայոց կաթողիկոս:
5) Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին դիմում է ցարական կառավարությանը՝ Գանձասարի կաթողիկոսությունը վերացնելու խնդրանքով:
6) Ժամանակի ընթացքում Աղթամարի կաթողիկոսությունը կորցնում է իր դերը և 1895թ. դադարում գոյություն ունենալուց:
7) 482թ. բյուզանդական կայսրի հրովարտակը դատապարտում էր Քաղկեդոնի ընդունած երկաբնակ վարդապետությունը:
8) 1815թ. Գանձասարի կաթողիկոսությունը վերացվում է և նրա փոխարեն ստեղծվում է եպիսկոպոսություն:

48 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են բնորոշում Կիլիկիայում հայկական թագավորության անկումից հետո հայոց կաթողիկոսական աթոռի վիճակը.**

1) Կաթողիկոսական աթոռը լիակատար վերահսկողություն սահմանեց ենթակա թեմերի նկատմամբ:
2) Կիլիկիայում իրենց տիրապետությունը հաստատած մահմեդական տիրակալները հարկատվությունից ազատեցին կաթողիկոսական աթոռը:
3) Դադարեցին ներքին երկպառակությունները և կաթողիկոսական աթոռը ակտիվ հոգևոր-մշակութային գործունեություն ծավալեց:
4) Սսի կաթողիկոսարանը վերականգնեց իր հեղինակությունը և կաթողիկոսական աթոռը կրկին դարձավ համազգային-եկեղեցական շահերն արտահայտող կառույց:
5) Ուժեղացան ներքին երկպառակությունները, տարբեր խմբավորումներ պայքար էին մղում կաթողիկոսական աթոռին տիրանալու համար:
6) Հայոց եկեղեցու ներքին գործերին մահմեդական տիրակալների միջամտելու հետևանքով բազմաթիվ կաթողիկոսներ զոհ գնացին նրանց կամայականություններին և չարաշահումներին:
7) Կիլիկիայում իրենց տիրապետությունը հաստատած մահմեդական տիրակալները ծանր հարկատվության ենթարկեցին կաթողիկոսական աթոռը:

49 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Զեյթունի 1895թ. ինքնապաշտպանության հայտնի գործիչներից էր Սուրբ Կարապետ վանքի վանահայր Նիկողայոս եպիսկոպոսը, ում ջոկատը բազմիցս աչքի էր ընկել մարտերում։
2) Մկրտիչ Խրիմյանի գլխավորած պատվիրակությունը Ներսես Վարժապետյանից պահանջում է գործուն դրիքորոշում դրսևորել Հայկական հարցի նկատմամբ։
3) Նույն օրը պատրիարքը նամակով դիմում է կաթողիկոս Գևորգ Դ-ին՝ տեղեկացնելով նրան այդ ամենի մասին՝ հուսալով, որ նա նույնպես պաշտոնապես կհայցի ցարի օգնությունը։
4) 1935թ. կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը որոշում է դադարեցնել հարաբերությունները խորհրդային իշխանությունների հետ։
5) Սինոդի փոխարեն ստեղծվում է աշխարհիկ և հոգևոր գործիչներից կազմված Գերագույն հոգևոր խորհուրդ։
6) Հայհեղկոմն ընդունում է որոշում, որով կառավարությունը պետականացնում է Ս. Էջմիածին վանքի արժեքները։
7) Խանասորի արշավանքին մասնակցում էին բազմաթիվ հայ հոգևորականներ՝ Բագրատ վարդապետ Թավաքալյանը, Ներսես քահանա Խարախանյանը և ուրիշներ։
8) Ժողովրդին զենքի էր կոչում Վարդան վարդապետը, ով երեքամյա բանտարկությունից հետո, անցնելով հայրենի Մուշ, շարունակեց հեղափոխական գործունեությունը։

50 **Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք չեն.**

1) Ս. Գրիգոր Լուսավորչի գործունեության շնորհիվ քրիստոնեությունը տարածվեց նաև Վրաստանում, Աղվանքում, Միջագետքում, Իսրայելում և Ասորիքում:
2) Արշակավան քաղաքի կառուցման պատճառով նախարարների մեծ մասը դուրս եկավ Հայոց Արշակ II թագավորի դեմ:
3) Երկրի բնակչության խիստ նվազման հանգամանքը հաշվի առնելով՝ Պապ թագավորը փակել է կուսանոցներ, կրճատել վանականների թիվը:
4) Հայաստանում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների գործունեության պատճառով I դարում սրվեցին հայ-հռոմեական հարաբերությունները:
5) Ս. Ոսկյանք և Ս. Սուքիասյանք նահատակվել են իշխանությունների հալածանքների հետևանքով:
6) 313 թ. Միլանի հրովարտակի ընդունման հետևանքով Հռոմեական կայսրությունում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն:
7) Հայ նախարարների միջնորդություններին և ճնշումներին տեղի տալով 432 թ. պարսից արքան կաթողիկոս Սահակ Պարթևին ազատեց աքսորից և թույլատրեց վերադառնալ Հայաստան:

51 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների պատճառա-հետևանքային կապեր:**

1) 1071թ. Մանազկերտի ճակատամարտից հետո, ազատվելով բյուզանդական գերիշխանությունից, մի քանի հայ իշխանական տներ փորձում էին ստեղծել քաղաքական նոր կենտրոններ:
2) Եվրոպական տիրակալները հայերի հետ բանակցությունների հիմքում դնում էին կաթոլիկ եկեղեցուն հնազանդվելու անհրաժեշտությունը, որի պատճառով Ստեփանոս Ե կաթողիկոսի՝ նրանց հետ բանանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին:
3) Բարսեղ Ա-ն 1090թ. այցելում է Մելիք Ա շահին, որից հետո անհասկանալի պատճառներով Հոնիի կաթողիկոսությունը շարունակում է գործել:
4) Անջատման հետևանքով վրաց եկեղեցին բաժանվում է Արևելյան եկեղեցական ընտանիքից և ընդունում Կ. Պոլսի տիեզերական պատրիարքի առաջնայնությունը:
5) Աղվանից Աբաս կաթողիկոսը սահմանեց կարգ, որով իր հաջորդները պետք է ձեռնադրվեին Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից:
6) Հակոբ Ջուղայեցին Ս. Էջմիածնում հրավիրում է ժողով, որը որոշում է օգնության խնդրանքով դիմել կայսրուհի Եկատիրինա 2-ին:
7) 1842թ. մահանում է Ներսես Ե կաթողիկոսը, որից հետո կաթողիկոս է ընտրվում Հովհաննես Ը-ն:
8) Կաթոլիկ եկեղեցու կողմից ինքը աստիճանների հարցի բարձրացումը պատրվակ էր, Հայոց եկեղեցու անկախության նկատմամբ ոտնձգություններ կատարելու համար:

52 **Քրիստոնեության ամրապնդման և հոգևոր կյանքի վերափոխման նպատակով ի՞նչ որոշումներ ընդունվեցին Աշտիշատի ժողովում.**

1) Ծառաների և իրենց ենթակաների հանդեպ գթասիրտ լինելու և ընդհանրապես, նախարարներին աշխարհիկ պաշտոնների մեջ հմտանալու համար բացել հատուկ դպրոցներ:
2) Արիոսի ուսմունքը մեկ անգամ ևս դատապարտելու և մերժելու նպատակով հաստատել Կ.Պոլսի տիեզերական ժողովի որոշումները:
3) Ճանապարհորդների և օտարականների համար հիմնել իջևանատներ և օթևաններ:
4) Ճգնավորական կամ անապատական շարժումը հովանավորելու նպատակով ճգնավորների համար հիմնել վանքեր և կուսանոցներ:
5) Եկեղեցին կրթված հոգևորականներով համալրելու նպատակով եկեղեցիներին ու վանքերին կից բացել դպրոցներ:
6) Ամուսնություններն ամրապնդելու և ամուսնալուծություններն արգելելու նպատակով սահմանել 20 կանոններ:
7) Սպանությունը, հարբեցողությունը, գողությունը և այլ հանցանքները արմատախիլ անելու համար սահմանել պատիժներ:
8) Բարեգործական հաստատությունների ծախսերը հոգալու համար կաթողիկոսին կից ստեղծել հոգևոր խորհուրդ:

53 **Ստորև թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք։**

1) Համաձայնություն ձեռք բերելով Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Մացակ Պապյանի հետ, Գևորգ արքեպիսկոպը հրավիրում է Ազգային-եկեղեցական ժողով։
2) Հայերի բարոյական կորովը բարձրացնելու նպատակով 300 հայ վրիժառուներ կազմակերպեցին պատժիչ գործողություն, որը հայնի է Խանասորի արշավանք անունով։
3) Մուհամմադի հեղինակությունն այնքան բարձրացավ, որ Յասրիբը վերանվանեցին «Մարգարեի քաղաք»։
4) Ի տարբերություն Աշտիշատի ժողովի որոշումների՝ Աղվենի թագավորական ամառանոցում ընդունված կանոնները չէին արգելում մերձավորերի միջև ամուսնությունը և այլն։
5) 1307թ. Սիսում գումարված ժողովը, որոշում է կրկին մերժել Քաղկեդոնի դավանանքը, բյուզանդական ծեսերն ու արարողությունները։
6) Մայր Աթոռի բողոքների հիման վրա ցարական կառավարությունը 1835թ. արգելում է կաթոլիկ միսիոներների գործունեությունը, որոնք տեղափոխվում են Գյումրի և նրան հարակից գյուղեր։
7) 1836թ. եկեղեցական կանոնադրությունը այդպես էլ չկարգավորեց ցարական կառավարության և Հայոց եկեղեցու հարաբերությունները։

54 **Թվարկված իրադարձություններից ո՞ր երկուսն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Տպարանի հիմնադրումը Էջմիածնում
2) Ներսիսյան դպրոցի հիմնադրումը
3) Թղթի գործարանի հիմնադրումը Էջմիածնում
4) «Կառավարիչ Ս. ժողովի» կամ Սինոդի հրավիրումը
5) Արմաշի դպրեվանքի հիմնումը
6) Հայոց եկեղեցու կանոնադրության «Պոլոժենիե»-ի հաստատումը
7) Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական պարբերական «Արարատ» հանդեսի հիմնադրումը
8) Աղթամարի կաթողիկոսության վերացումը

55 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Գագիկի և Դավիթ Բագրատունու(Անհողին) ռազմական բախումը կանխվում է կաթողիկոսի միջնորդությամբ։
2) Շուրջ 70 տարիների փորձառությունը Գրիգոր Նարեկացին ամփոփում է «Մատյան ողբերգության» աղոթամատյանի մեջ։
3) Մահանում է Գագիկ 1-ինը և սկիզբ է առնում հայոց պետության քաղաքական ճգնաժամը։
4) Բագրատունյաց գահին է բազմում Աշոտի որդին Գագիկ 2-րդը։
5) Պետրոս կաթողիկոսի մահվանից հետո Խաչիկ Բ Ավեցին հռչակվում է կաթողիկոս։
6) Մեծ Հայքի եկեղեցական մի շարք գործիչներ որոշում են Անիում վերականգնել Հայոց կաթողիկոսությունը։
7) Բարսեղ Ա-ն թողնում է Անին և հաստատվում Շուղրիի Կարմիր վանքում։
8) Գրիգոր Զ Ապիրատի մահով ավարտվում է Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանությունը։
9) Գրիգոր Գ կաթողիկոսը վատառողջության պատճառով գահը հանձնում է եղբորը՝ Գրիգոր Դ Շնորհալուն։

56 **Թվարկված իրադարձություններից ո՞ր երկուսն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը .**

1) Նիկիայի տիեզերական ժողովի գումարումը
2) Կոստանդնուպոլիսի տիեզերական ժողովի գումարումը
3) Հայոց գրերի ստեղծումը
4) Երուսաղեմի հայոց պատրիարքության հիմնադրումը
5) Եփեսոսի տիեզերական ժողովի գումարումը
6) Քաղկեդոնի ժողովի գումարումը
7) Վրաց եկեղեցու անջատումը Արևելյան եկեղեցական ընտանիքից
8) Ձիրավի ճակատամարտը
9) Քրիստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանումը

57 **Որո՞նք են ճիշտ պատասխանները.**

1) Ըստ հեդոնիզմի բարի է այն, ինչ հաճույք է բերում:
2) Համաձայն Էվդեմոնիզմի՝ բարի է այն, ինչ տառապանքով է ծնվում:
3) Հավատարմության պսակը հույսն է, որով անհատը ճանաչում է աշխարհը:
4) Հույսը այն առաքինությունն է, որը մեզ մղում է ձգտելու, ակնկալելու բարին:
5) Եկեղեցին կառուցելիս կատարվում է տնօրինեքի արարողություն:
6) Ըստ Կոսմոպոլիտիզմի մարդը պետության և երկրի քաղաքացին է:
7) Համբերությունը այն առաքինությունն է, որով անհատը ճանաչում է իրեն:
8) Եկեղեցի բառն առաջացել է էկլեսիա բառից, որը բառացի նշանակում է ժողովարան, ժողովրդի հավաքույթ:

58 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունը.**

1) Ինդետերմինիզմի համաձայն այն, ինչն օգտակար է մարդուն անձնապես բարի և արդար է, իսկ ինչը վնասակար է, ընդհակառակը՝ չար է և անարդար:
2) Էվդեմոնիզմը որպես մարդու բարոյականության հիմք ընդունում է երջանկության (հաճույքի, բավարարվածության) ձգտումը:
3) Նիհիլիզմի համաձայն բարոյական հատկանիշներն ու առաքինությունները աստվածային պարգևներ են:
4) Դետերմինիզմի համաձայն մարդը կամքի ազատություն չունի, յուրաքանչյուր արարք նա կատարում է արտաքին ազդակների ճնշման տակ:
5) Արդարությունն, ըստ սոփեստների, բարոյական առաքինություններից ամենակատարյալն է:
6) Բարոյագիտությունն, ըստ Արիստոտելի, գիտություն է այն մասին, թե մարդն ինչպես կարող է հասնել բարձրագույն բարիքին՝ երջանկությանը կամ երանությանը:
7) Կոսմոպոլիտիզմի համաձայն մարդը բացարձակ ազատ է, ինքն է ընտրում իր ճանապարհը և կարող է անել, ինչ կամենա:
8) Հեդոնիզմի համաձայն կյանքի իմաստը հաճույքների և վայելքների մեջ է:

59 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Թադևոս առաքյալի նահատակության վայրում հետագայում կառուցվում է Արտազի Ս. Թադեի վանքը, որը գտնվում է Իրաքի տարածքում:
2) Սանատրուկ թագավորը հարգանքով է վերաբերում Բարդուղիմեոս առաքյալին:
3) Հայոց եկեղեցու նվիրապետությունը կազմավորվեց ինքնուրույն, առանց արտաքին որևիցե միջամտության:
4) 302 թ. սեպտեմբերի 15-ին Սուրբ Խաչի տոնի օրը նորակառույց տաճարը օծվում և անվանվում է Ս. Աստվածածին:
5) Ըստ սրբոց Ոսկյանք վկաների ավանդության 5 արքայազուն իշխանները ճանապարհին հանդիպել են Բարդուղիմեոս առաքյալին և քրիստոնեություն ընդունել:
6) Ս. Հռիփսիմյանց կույսերի նահատակությունից հետո Տրդատ թագավորը չի խնայում նաև քրոջը:
7) Հռոմեական կայսր Մաքսիմիանոս Դայա կայսրը, ցանկանալով Հայաստանում վերստին հաստատել հեթանոսությունը, 312թ. պատերազմ է հայտարարում Հայաստանին:

60 **Հայոց եկեղեցու խորհուրդների վերաբերյալ բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Հաղորդություն ստանալու համար անպայման պետք է մկրտված լինել։
2) Մկրտությունից անմիջապես հետո քահանան մեռոնով օծում, դրոշմում է մկրտվածի զգայարաններն ու մարմնի որոշ մասերը։
3) Ապաշխարության խորհրդով թողություն է տրվում այն մեղքերին, որոնք մարդը գործել է ծննդյան օրվանից ի վեր։
4) Ապաշխարության խորհուրդը պատարագի արարողության առանցքն է։
5) Ձեռնադրության խորհուրդը միշտ կատարվում է պատարագի ընթացքում։
6) Հաղորդությունն այն խորհուրդն է, որով հոգևորականը հատուկ աղոթք է կարդում հիվանդի համար։
7) Մկրտության խորհուրդը միայն մեկ անգամ է կատարվում, իսկ Դրոշմի խորհուրդը կարող է կրկնվել։
8) Պսակադրության արարողության ժամանակ նորապսակների գլխին դրվող թագերը խորհրդանշում են, որ նրանք ամբողջ կյանքի ընթացքում պետք է պահպանեն հավատարմությունը պսակադրության ուխտին։

61 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Մխիթար Գոշը գրել է, որ Աստծու գոյությունը կարելի է հիմնավորել բանականության միջոցով՝ «հետևանքներից դեպի պատճառը ապացույցների միջոցով»։
2) Գրիգոր Տաթևացին գրում է, որ քրիստոնեական բոլոր դոգմաները չէ, որ կարելի է հիմնավորել բանականության միջոցով ոչ թե այն պատճառով, որ դրանք հակաբնական են, այլ որ վերբնական են։
3) Եզնիկ Կողբացին գրում է, «Ընչասիրությունը զուգակից է կռապաշտության»։
4) Պողոս առաքյալը գրում է, «Ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ»։
5) Արիստոտելը գրել է, մի բան է իմանալ բարին, մի այլ բան՝ բարիք գործել։
6) Մատթեոս Ուռհայեցին Մխիթար Գոշի մասին գրում է. «Գիտությամբ հռչակված այս մարդը Գանձակ քաղաքից էր, քրիստոնյա ծնողների զավակ, ովքեր նրան տվեցին Սուրբ Գրքի ուսման»։
7) Մխիթար Անեցին գրել է, ով պատմություն չգիտի, նա մտավոր կույր է, և ողջ կյանքում կխարխափի մթության մեջ։
8) Ըստ ավանդության՝ մկրտության ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորիչը Ս. Տրդատին վերանվանել է Մատթեոս։

62 **Գտնել սխալ պնդումները.**

1) Վեղարը սրածայր գլխադիր է. այն բացառապես կրում են Հայոց եկեղեցու կուսակրոն հոգևորականները:
2) Խաչակնքումը կատարվում է ձախ ձեռքի երեք մատները միացրած, ինչը խորհրդանշում է Քրիստոսի մեջ կատարյալ Աստծո և կատարյալ մարդու անբաժան միությունը:
3) Երեկոյան ժամերգությունների ընթացքում հոգևոր դասը խաչով, խաչվառով և Ավետարանով, նախ օրհնում է Արևելքը և այնտեղ գտնվող Հայոց հայրապետությունը, հանուն Սուրբ Երրորդության, այնուհետև՝ օրհնում և առ Աստված խնդրանք է ներկայացնում աշխարհի մյուս կողմերի համար:
4) Հայոց եկեղեցու արարողակարգի մեջ բացառիկ կարևոր տեղ է զբաղեցնում Ս.Պատարագը, որը բաղկացած է չորս հիմնական մասերից:
5) Եկեղեցում ատյանի հյուսիսային կողմում գտնվում է մկրտության ավազանը, իսկ արևելյան կողմում բեմը կամ խորանը:
6) Հոգեհանգստյան արարողության վերջում՝ «Քրիստոս որդի Աստուծոյ» աղոթքի ընթացքում, հիշատակվում են ննջեցյալների անունները:
7) Հայոց եկեղեցում կա նվիրապետական 9 աստիճան. որոնցից վարդապետության աստիճանը որպես գիտական աստիճան շնորհվում է բոլոր քահանաներին:
8) Մատաղն արգելված է պահոց օրերին և Տաղավար տոներին:

63

Ստորև թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք։

1) Նահապետ Ա Եդեսացին պարսկական իշխանությունների հետ հարաբերությունները չվատթարացնելու համար, հրաժարվել է աջակցել Իսրայել Օրուն։
2) Աբրահամ Գ Կրետացին 1735թ. ընծաներով ընդառաջ է գնում պարսից Նադիր շահին և այդ ձևով Հայաստանն ու Մայր Աթոռը ազատում ավերածություններից։
3) Սիմեոն Ա Երևանցին 35 հրովարտակ է ստացել Նադիրից՝ ի շահ եկեղեցու և հայ ժողովրդի, որի շնորհիվ Մայր Աթոռը ազատվել է հարկերից։
4) Ղուկաս Ա Կարնեցին կարողացավ բարձրացնել Մայր Աթոռի հեղինակությունը, որի շնորհիվ նաև վերականգնեց Էջմիածնի իրավունքը Ռուսաստանի հայոց թեմի նկատմամբ։
5) Ղուկաս Ա Կարնեցու հորդորանքով Մադրասում սկսում է հրատարակվել հայկական առաջին պարբերականը՝ «Ազդարարը»։
6) Սիմեոն Ա Երևանցին գտնում էր Հոսեփ Էմինի և մյուս գործիչների Հայաստանն ազատագրելու ճիգերը անպատրաստ և ընդդիմանում էր ապստամբության քարոզչությանը։
7) Սիմեոն Ա Երևանցին Թիֆլիսում հանկարծամահ է լինում, որի պատճառով կաթողիկոսական աթոռը դառնում է պայքարի առարկա։
8) Աբրահամ Գ Կրետացին Մայր Աթոռում հրավիրում է ժողով, որը դիմում է Եկատիրինա 2-ին՝ խնդրելով նրա հովանավորչությունը։

64 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

1) «Հայոց եկեղեցու կանոնադրության» Թիֆլիսյան տարբերակը 1830 թ. Պետերբուրգ ուղարկվելուց հետո չհաստատվեց, քանի որ չէր համապատասխանում ո՛չ ցարական բարձրագույն իշխանության ցանկությանը, ո՛չ էլ Հայոց եկեղեցու հնավանդ ծեսերին և կանոններին:
2) Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի և Նիկոլայ II կայսեր հանդիպման արդյունքում կաթողիկոսին թույլատրվեց Ռուսաստանի հայաբնակ վայրերում արևմտահայությանն օգնելու նպատակով հանգանակություն կազմակերպել:
3) «Գավառահայ հարստահարությունների բողոքագրքի» Ալեքսանդր I ցարին ներկայացնելու հիմնական պատճառը արևմտահայության և արևելահայության ծանր վիճակի մասին ցարին տեղեկացնելն էր:
4) Մայիսյան հերոսամարտերի արդյունքում 1920 թ. մայիսի 28-ին վերականգնվեց հայոց անկախ պետականությունը:
5) Աբրահամ Գ կրետացու անհեռատես քայլերի հետևանքով Նադիր շահը կողոպտեց և ավերածությունների ենթարկեց Հայաստանը:
6) Հայոց եկեղեցին թուլացնելու նպատակով 1920 թ. օգոստոսի 4-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշմամբ փակվեցին Հայոց եկեղեցու բոլոր թեմերը, պետականացրեցին Ս. Էջմիածնի վանքի արժեքները և հանձնեցին ֆինանսների ժողկոմատին:
7) Հայոց հոգևոր վերազարթոնքի նպատակով Գարեգին Բ. կաթողիկոսը հռչակեց օրհնության օրեր՝ Սուրբ Սարգիս զորավարի տոնը՝ երիտասարդների օրհնության օր, Ծաղկազարդը՝ մանուկների օրհնության օր և այլն:
8) Գարեգին Ա կաթողիկոսի ջանքերով Երևանի պետական համալսարանում հիմնվեց Աստվածաբանության ֆակուլտետ:

65 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Արշակ 2-րդը հրավիրում է ժողով, որը կաթողիկոս է ընտրում Ս. Ներսեսին։
2) Մահացավ Ս. Վրթանես թագավորը։
3) Մահացել է Ս. Սահակ Պարթևը։
4) Աշտիշատում նրա նախաձեռնությամբ գումարվում է Հայոց առաջին Ազգային-եկեղեցական ժողովը։
5) Պարսից արքունիքը թագավոր է ճանաչում Արտաշես 3-ին։
6) Հուլիանոսին փոխարինած կայսրը պարսիկների հետ կնքում է «Ամոթալի պայմանագիրը»։

66 **Հռոմկլայում աթոռակալած Հայոց կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց աթոռակալման ժամանակագրական հաջորդականության.**

1) Ստեփանոս Դ Հռոմկլայեցի
2) Կոստանդին Ա Բարձրբերդցի
3) Գրիգոր Դ Տղա
4) Ներսես Դ Շնորհալի
5) Գրիգոր Զ Ապիրատ
6) Հովհաննես Զ Սսեցի

67 **Կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.**

1) Մովսես Բ
2) Բաբկեն Ա
3) Ներսես Բ
4) Ս. Հովսեփ Ա
5) Զաքարիա Ա
6) Սարգիս Ա
7) Խաչիկ Ա

68 **Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռանիստ վայրերի անունները դասավորել ըստ դրանց աթոռանիստ դառնալու հաջորդականության.**

1) Անի
2) Սիս
3) Կարս
4) Աղթամար
5) Հռոմկլա
6) Շուղրի (Քեսունի) Կարմիր վանք
7) Դվին

69 **Կատարել համապատասխանեցում.**

Ա) Խաչիկ Ա
Բ) Գրիգոր Բ
Գ) Գրիգոր Դ
Դ) Ս.Ներսես Դ
Ե) Անանիա Ա
Զ) Գևորգ Գ
Է) Գրիգոր Գ

1) Մոկացի
2) Տղա
3) Վկայասեր
4) Կլայեցի
5) Արշարունի
6) Պահլավունի
7) Գառնեցի

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Հոգևոր գործչի անունը համապատասխանեցնել նրա հուղարկավորման տեղի անվանը.**

ա) Ս. Գրիգոր Նարեկացի
բ) Ներսես Ե. Աշտարակեցի
գ) Ս. Գրիգոր Տաթևացի
դ) Ս. Գրիգոր Լուսավորչ
ե) Ս. Արիստակես
զ) Գևորգ Բ. Գառնեցի
է) Ս. Սահակ Ա. Պարթև

1. Աշտիշատ
2. Թորդան
3. Թբիլիսի
4. Տաթևի վանք
5. Նարեկավանք
6. Թիլ
7. Ս. Էջմիածնի Մայր տաճար
8. Զորովանք

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է